

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

**Հայաստանի Հանրապետության և Տաջիկստանի Հանրապետության միջև
եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու և հարկերի վճարումից
խուսափելը կանխելու մասին**

Հայաստանի Հանրապետությունը և Տաջիկստանի Հանրապետությունը, ղեկավարվելով երկու Պայմանավորվող պետությունների միջև տնտեսական, գիտատեխնիկական ու մշակութային համագործակցությունը զարգացնելու և ամրապնդելու ձգտումով և եկամուտների ու գույքի հարկերի առնչությամբ կրկնակի հարկումը բացառելու և հարկերի վճարումից խուսափելը կանխելու նպատակով, որոշեցին կնքել սույն Համաձայնագիրը և պայմանավորվեցին ներքոհիշյալի մասին.

Հոդված 1

Անձինք, որոնց նկատմամբ կիրառվում է Համաձայնագիրը

Սույն Համաձայնագիրը կիրառվում է այն անձանց նկատմամբ, որոնք Պայմանավորվող պետություններից մեկի կամ երկուսի ռեզիդենտներ են:

Հոդված 2

Այն հարկերը, որոնց վրա տարածվում է Համաձայնագիրը

1. Սույն Համաձայնագիրը կիրառվում է այն եկամուտների և գույքային հարկերի նկատմամբ, որոնք գանձվում են Պայմանավորվող պետություններից մեկի կամ նրա վարչատարածքային ստորաբաժանումների կամ իշխանության տեղական մարմինների անունից՝ անկախ դրանց գանձման եղանակից:

2. Եկամտից և գույքից գանձվող հարկեր են համարվում եկամուտների ընդհանուր գումարից, գույքի ընդհանուր գումարից կամ դրանց առանձին տարրերից գանձվող բոլոր հարկերը, ներառյալ շարժական կամ անշարժ գույքի օտարումից առաջացող եկամտից, ձեռնարկությունների կողմից վճարվող աշխատավարձի կամ ռոճիկի ընդհանուր գումարից, ինչպես նաև գույքի հավելածից գանձվող հարկերը:

3. Սույն Համաձայնագիրը կիրառվում է, մասնավորապես, գոյություն ունեցող հետևյալ հարկերի նկատմամբ՝

ա) Հայաստան Հանրապետությունում.

- շահութահարկ,
- եկամտահարկ,
- գույքահարկ

(այսուհետ՝ հայկական հարկեր).

բ) Տաջիկստանի Հանրապետությունում.

- իրավաբանական անձանց եկամուտներից հարկ,
- ֆիզիկական անձանցից եկամտահարկ,
- իրավաբանական և ֆիզիկական անձանց գույքահարկ

(այսուհետ՝ տաջիկական հարկեր):

4. Համաձայնագիրը կիրառվում է նաև ցանկացած նույնական կամ ըստ էության համանման հարկերի նկատմամբ, որոնք գանձվելու են սույն Համաձայնագրի ստորագրումից հետո՝ ի լրումն գոյություն ունեցող հարկերի կամ դրանց փոխարեն: Յուրաքանչյուր տարվա վերջում Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները կծանուցեն միմյանց իրենց համապատասխան հարկային օրենսդրությունների մեջ կատարված ցանկացած էական փոփոխության մասին:

Հոդված 3

Ընդհանուր սահմանումներ

1. Սույն Համաձայնագրի նպատակների համար, եթե այլ բան չի բխում ենթատեքստից.

ա) «Պայմանավորվող պետություն» և «մյուս Պայմանավորվող պետություն» տերմինները, ենթատեքստից կախված, նշանակում են՝ Հայաստան կամ Տաջիկստան,

բ) «Հայաստան» տերմինը նշանակում է՝ Հայաստանի Հանրապետություն,

գ) «Տաջիկստան» տերմինը նշանակում է՝ Տաջիկստանի Հանրապետություն և աշխարհագրական իմաստով օգտագործվելիս ներառում է նրա տարածքը, ներքին ջրերը, դրանց վրայի օդային տարածքը, որտեղ Տաջիկստանի Հանրապետությունը, միջազգային իրավունքի նորմերի համաձայն, կարող է իրականացնել ինքնիշխան իրավունքներ և իրավասություն, ներառյալ ընդերքի և բնական պաշարների օգտագործման իրավունքները, և որտեղ գործում է Տաջիկստանի Հանրապետության օրենսդրությունը,

դ) «անձ» տերմինը ներառում է՝ ֆիզիկական անձ, ընկերություն և անձանց ցանկացած այլ միավորում,

ե) «ընկերություն» տերմինը նշանակում է՝ ցանկացած կորպորատիվ կազմավորում կամ ցանկացած այլ միավորում, որոնք հարկման նպատակների համար դիտարկվում են որպես կորպորատիվ կազմավորումներ,

զ) «Պայմանավորվող պետության ձեռնարկություն» և «մյուս Պայմանավորվող պետության ձեռնարկություն» տերմինները նշանակում են, համապատասխանաբար, մի Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից ղեկավարվող ձեռնարկություն և մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից ղեկավարվող ձեռնարկություն,

է) «միջազգային փոխադրում» տերմինը նշանակում է՝ Պայմանավորվող պետության ձեռնարկության կողմից շահագործվող ծովային կամ օդային նավով, երկաթուղային կամ ավտոմոբիլային տրանսպորտային միջոցով ցանկացած փոխադրում, բացի այն դեպքերից, երբ ծովային կամ օդային - նավը, երկաթուղային կամ ավտոմոբիլային տրանսպորտը շահագործվում է բացառապես մյուս Պայմանավորվող պետությունում գտնվող կետերի միջև,

ը) «ազգային անձ» տերմինը նշանակում է.

ի) Պայմանավորվող պետության քաղաքացիություն ունեցող ցանկացած ֆիզիկական անձ,

ii) Պայմանավորվող պետության գործող օրենսդրության համաձայն իր կարգավիճակը ստացած ցանկացած իրավաբանական անձ, ընկերակցություն կամ ասոցիացիա,

թ) «իրավասու մարմին» տերմինը նշանակում է.

i) Հայաստանի Հանրապետությունում՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարար և Հայաստանի Հանրապետության Կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության պետ կամ նրանց լիազորած ներկայացուցիչներ,

ii) Տաջիկստանի Հանրապետությունում՝ ֆինանսների նախարարություն կամ նրա լիազորած ներկայացուցիչ:

2. Սույն Համաձայնագիրը Պայմանավորվող պետության կողմից ցանկացած պահի կիրառվելիս նրանում չսահմանված ցանկացած տերմին, եթե այլ բան ենթատեքստից չի բխում, պետք է ունենա այն նշանակությունը, որը նրան տվյալ պահին տրվում է այդ Պետության օրենսդրությամբ՝ այն հարկերի առնչությամբ, որոնց վրա տարածվում է սույն Համաձայնագիրը:

Տերմինի՝ հարկային օրենսդրությամբ կիրառվող ցանկացած նշանակությունը գերիշխում է այդ Պետության այլ օրենսդրությամբ սահմանված նշանակության նկատմամբ:

Հոդված 4 Ռեզիդենտ

1. Սույն Համաձայնագրի նպատակների համար «Պայմանավորվող պետության ռեզիդենտ» տերմինը նշանակում է՝ ցանկացած անձ, որը, այդ Պետության օրենսդրության համաձայն, այնտեղ ենթակա է հարկման մշտական բնակության վայրի, մշտական գտնվելու վայրի, կառավարման վայրի, ստեղծման և գրանցման վայրի կամ նման բնույթի այլ չափանիշներով, ինչպես նաև ներառում է նրան՝ Պետությանը, կամ ցանկացած քաղաքական-վարչատարածքային ստորաբաժանունը կամ նրա իշխանության տեղական մարմինները, ինչպես նաև Պետության կենտրոնական (ազգային) բանկը: Սակայն այդ տերմինը չի ներառում ցանկացած անձի, որը ենթակա է հարկման այդ Պետությունում միայն այդ Պետության աղբյուրներից ստացված եկամուտների կամ այնտեղ գտնվող գույքի առնչությամբ:

2. Եթե, սույն հոդվածի 1-ին կետի դրույթներին համապատասխան, ֆիզիկական անձը հանդիսանում է Պայմանավորվող երկու պետությունների ռեզիդենտ, նրա կարգավիճակը որոշվում է հետևյալ կերպով.

ա) նա համարվում է միայն այն Պետության ռեզիդենտը, որտեղ ունի մշտական կացարան. եթե նա երկու Պետություններում էլ ունի մշտական կացարան, ապա նա համարվում է միայն այն Պետության ռեզիդենտը, որտեղ ունի առավել սերտ անձնական և տնտեսական կապեր (կենսական շահերի կենտրոն),

բ) եթե հնարավոր չէ որոշել այն Պետությունը, որտեղ նա ունի կենսական շահերի կենտրոն, կամ եթե նա այդ Պետություններից և ոչ մեկում չունի մշտական կացարան, ապա համարվում է միայն այն Պետության ռեզիդենտը, որտեղ բնակվում է 182 օրվանից ավել,

զ) եթե անձը բնակվում է երկու Պետություններում, կամ եթե նա երկու Պետություններում էլ չի բնակվում, ապա համարվում է միայն այն Պետության ռեզիդենտը, որի քաղաքացին է,

դ) եթե նա հանդիսանում է երկու Պետությունների քաղաքացի, կամ եթե նա չի հանդիսանում նրանցից ոչ մեկի քաղաքացի, ապա Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները այդպիսի ֆիզիկական անձի ռեզիդենտության հարցը լուծում են փոխադարձ համաձայնությամբ:

3. Այն դեպքում, երբ, սույն հոդվածի 1-ին կետի դրույթներին համաձայն, ֆիզիկական անձ չհանդիսացող անձը հանդիսանում է Պայմանավորվող երկու պետությունների ռեզիդենտ, ապա նա համարվում է այն Պետության ռեզիդենտը, որտեղ ստեղծվել է:

Հոդված 5

Մշտական հաստատություն

1. Սույն Համաձայնագրի նպատակների համար «մշտական հաստատություն» տերմինը նշանակում է՝ գործունեության մշտական վայր, որի միջոցով ամբողջությամբ կամ մասամբ իրականացվում է ձեռնարկության ձեռնարկատիրական գործունեությունը:

2. «Մշտական հաստատություն» տերմինը մասնավորապես ներառում է.

ա) ղեկավարման վայր,

բ) բաժանմունք,

գ) գրասենյակ,

դ) ֆաբրիկա,

ե) արհեստանոց,

զ) հանքահոր, նավթի կամ գազի հորատանցք, քարհանք կամ բնական պաշարների արդյունահանման այլ վայր,

է) արտավայրեր, գյուղատնտեսական կամ անտառային հողատարածություններ,

ը) ապրանքների իրացման նպատակով օգտագործվող պահեստ կամ ուրիշ շինություն:

3. «Մշտական հաստատություն» տերմինը ներառում է նաև.

ա) շինարարական հրապարակը կամ շինարարական, մոնտաժման կամ հավաքման օբյեկտը կամ այդ աշխատանքների իրականացման նկատմամբ հսկողություն կիրառելու հետ կապված ծառայությունները, եթե միայն այդպիսի հրապարակը կամ օբյեկտը գոյություն ունեն 12 ամսից ավել, կամ այդպիսի ծառայությունները մատուցվում են ավելի քան 12 ամիս.

բ) բնական պաշարների հետախուզման համար օգտագործվող սարքը կամ կառույցը կամ այդ աշխատանքների իրականացման նկատմամբ հսկողություն կիրառելու հետ կապված ծառայությունները կամ բնական պաշարների հետախուզման համար օգտագործվող հորատման սարքը կամ նավը, եթե միայն այդպիսի օգտագործումը տևում է ավելի քան 12 ամիս, կամ այդպիսի ծառայությունները մատուցվում են 12 ամսից ավել ժամանակահատվածում.

գ) ծառայությունների մատուցումը, ներառյալ ռեզիդենտների կողմից՝ խորհրդատվական ծառայությունները, ռեզիդենտի կողմից այդպիսի նպատակների համար վարձված ծառայողների կամ այլ անձնակազմի միջոցով, բայց եթե միայն նման բնույթի գործունեությունը (այդպիսի կամ դրա

հետ կապված նախագծի) Պայմանավորվող պետության տարածքում շարունակվում է ավելի քան 12 ամիս:

4. Չնայած սույն հոդվածի նախորդ դրույթներին՝ «մշտական հաստատություն» տերմինը չի ներառում.

ա) շինությունների կամ սարքավորումների օգտագործումը բացառապես ձեռնարկությանը պատկանող ապրանքների կամ արտադրանքի պահպանման կամ ցուցադրման նպատակով,

բ) ձեռնարկությանը պատկանող ապրանքների կամ արտադրանքի պաշարների պահումը բացառապես պահպանման կամ ցուցադրման նպատակով,

գ) ձեռնարկությանը պատկանող ապրանքների կամ արտադրանքի պաշարների պահումը բացառապես այլ ձեռնարկության կողմից վերամշակման նպատակով,

դ) գործունեության մշտական վայրի պահումը բացառապես ձեռնարկության համար ապրանքների կամ արտադրանքի գնման կամ տեղեկությունների հավաքման նպատակով,

ե) գործունեության մշտական վայրի պահումը բացառապես ձեռնարկության համար նախապատրաստական կամ օժանդակ բնույթի ցանկացած այլ գործունեության իրականացման նպատակների համար,

զ) գործունեության մշտական վայրի պահումը բացառապես *ա-ե* ենթակետերում նշված գործունեության տեսակների ցանկացած համակցության իրականացման համար՝ պայմանով, որ այդ համակցության արդյունքում գործունեության մշտական վայրի ընդհանուր գործունեությունը պետք է կրի նախապատրաստական կամ օժանդակ բնույթ:

5. Չնայած 1-ին և 2-րդ կետերի դրույթներին, եթե անկախ կարգավիճակով գործակալ համարվող անձից տարբերվող անձը, որի նկատմամբ կիրառվում է 6-րդ կետը, գործում է ձեռնարկության անունից, ունի կամ սովորաբար օգտագործում է Պայմանավորվող պետությունում ձեռնարկության անունից պայմանագրեր կնքելու իրավասություն կամ պահում է ձեռնարկությանը պատկանող ապրանքների պաշարները, որոնցից ձեռնարկության անունից իրականացվում է դրանց կանոնավոր իրացումը, ապա այդ ձեռնարկությունը դիտվում է որպես այդ մյուս Պետությունում մշտական հաստատություն ունեցող՝ ցանկացած գործունեության առումով, որն այդ անձն իրականացնում է ձեռնարկության համար՝ բացառությամբ, եթե այդ անձի գործունեությունը սահմանափակվում է 4-րդ կետում նշվածով, որը եթե նույնիսկ իրականացվում է մշտական վայրի միջոցով, ապա, այդ կետի դրույթների համաձայն, այդ գործունեության մշտական վայրը չի վերածում մշտական հաստատության:

6. Ձեռնարկությունը չի դիտվի Պայմանավորվող պետությունում մշտական հաստատություն ունեցող միայն այն պատճառով, որ ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում այդ Պետությունում բրոքերի, կոմիսիոն գործակալի կամ անկախ կարգավիճակ ունեցող գործակալի միջոցով՝ պայմանով, որ այդպիսի անձինք գործեն իրենց սովորական գործունեության շրջանակներում:

7. Այն փաստը, որ Պայմանավորվող պետության ռեզիդենտ հանդիսացող ընկերությունը վերահսկում կամ վերահսկվում է մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ հանդիսացող ընկերության կողմից կամ ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում այդ մյուս

Պետությունում (մշտական հաստատության (ներկայացուցչության) միջոցով կամ այլ կերպ), ինքնին այդ ընկերություններից մեկին չի վերածում մյուսի մշտական հաստատությանը (ներկայացուցչությանը):

Հոդված 6 **Եկամուտ անշարժ գույքից**

1. Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից՝ մյուս Պայմանավորվող պետությունում գտնվող անշարժ գույքից ստացվող եկամուտները (ներառյալ եկամուտները գյուղատնտեսությունից և անտառ-տնտեսությունից) կարող են հարկվել այդ մյուս Պետությունում:

2. «Անշարժ գույք» տերմինն ունի այն նշանակությունը, որը նա ունի այն Պայմանավորվող պետության օրենսդրությամբ, որտեղ գտնվում է դիտարկվող գույքը: Այս տերմինը բոլոր դեպքերում ներառում է անշարժ գույքին օժանդակ գույքը, գյուղատնտեսությունում և անտառային տնտեսու-թյունում օգտագործվող անասուններն ու սարքավորումները, հողային սեփականության նկատմամբ օրենսդրությամբ նախատեսված իրավունքները, անշարժ գույքի ուզուֆրուկտը, ինչպես նաև հանքային ռեսուրսների, աղբյուրների և այլ բնական հանածոների մշակման կամ մշակման իրավունքի համար փոխհատուցման կարգով՝ փոփոխական և հաստատագրված վճարումների իրավունքները: Ծովային նավերն ու օդանավերը, երկաթուղային և ավտոմոբիլային տրանսպորտային միջոց-ները որպես անշարժ գույք չեն դիտվում:

3. Սույն հոդվածի 1-ին կետի դրույթները կիրառվում են անշարժ գույքի անմիջական օգտագործումից, վարձակալության տրամադրումից կամ ցանկացած այլ ձևով օգտագործումից ստացված եկամտի նկատմամբ:

4. 1-ին և 3-րդ կետերի դրույթները կիրառվում են նաև ձեռնարկության անշարժ գույքից առաջացած եկամտի և անկախ անձնական ծառայություններ մատուցելու համար օգտագործվող անշարժ գույքից առաջացած եկամտի նկատմամբ:

Հոդված 7 **Շահույթ ձեռնարկատիրական գործունեությունից**

1. Պայմանավորվող պետության ձեռնարկության շահույթը հարկվում է միայն այդ Պետությունում, եթե միայն այդպիսի ձեռնարկությունը մյուս Պայմանավորվող պետությունում ձեռնարկատիրական գործունեությունը չի իրականացնում այնտեղ տեղակայված մշտական հաստատության միջոցով: Եթե ձեռնարկությունը ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում վերը նշված ձևով, ապա այդ ձեռնարկության շահույթը կարող է հարկվել այն մյուս Պետությունում, բայց միայն այն մասով, որը վերագրվում է այդպիսի մշտական հաստատությանը:

2. Հաշվի առնելով 3-րդ կետի դրույթները, եթե Պայմանավորվող պետության ձեռնարկությունը ձեռնարկատիրական գործունեություն է իրա-կանացնում կամ իրականացրել է մյուս Պայմանավորվող պետությունում այնտեղ տեղակայված մշտական հաստատության միջոցով, ապա Պայմա-նավորվող պետություններից յուրաքանչյուրում այդ մշտական հաստատությանն է վերագրվում այն շահույթը, որը նա կարող էր ստանալ

այդպիսի կամ համանման պայմաններում զբաղված՝ ինքնուրույն և առանձին ձեռնարկություն լինելու դեպքում և գործեր ամբողջովին անկախ այն ձեռնարկությունից, որի մշտական հաստատությունն է:

3. Մշտական հաստատության շահույթը որոշելիս թույլատրվում է մշտական հաստատության գործունեության նպատակների համար կատարված՝ փաստաթղթերով հիմնավորված ծախսերի հանում, ներառյալ կառավարչական և ընդհանուր վարչական ծախսերը, անկախ այն հանգամանքից՝ կատարված են դրանք այն Պետությունում, որտեղ գտնվում է այդ մշտական հաստատությունը կամ նրա սահմաններից դուրս՝ բացառությամբ գլխավոր ձեռնարկությանը վճարվող գումարների, ինչպիսիք են պատենտների կամ այլ իրավունքներից օգտվելու կամ մատուցած ծառայությունների կամ ղեկավարման համար միջնորդավճարների տեսքով տարբեր վճարումները կամ հոնորարների կամ նրա կողմից մշտական հաստատությանը տրամադրված գումարի դիմաց տոկոսների վճարումները:

4. Եթե Պայմանավորվող պետության կողմից մշտական հաստատությանը վերաբերող շահույթի որոշումը ձեռնարկության տարբեր ստորաբաժանումների միջև շահույթի ընդհանուր գումարի համամասնական բաշխման հիման վրա հանդիսանում է սովորական երևույթ, ապա սույն հոդվածի 2-րդ կետում ոչինչ չի խոչընդոտի Պայմանավորվող պետությանը հարկվող շահույթը որոշել այնպիսի բաշխման միջոցով, ինչպես սովորաբար ընդունված է:

Բաշխման ընտրված մեթոդը պետք է տա արդյունքներ՝ սույն հոդվածում ընդգրկված սկզբունքներին համապատասխան:

5. Ոչ մի շահույթ չի հաշվեգրվում մշտական հաստատությանը այդ մշտական հաստատության կողմից ձեռնարկության համար ապրանքի կամ արտադրանքի միայն գնման պատճառով:

6. Նախորդ կետերի նպատակների համար մշտական հաստատությանը վերաբերող շահույթը ամեն տարի որոշվում է միևնույն եղանակով, եթե չկան սահմանված կարգի փոփոխման ծանրակշիռ և բավարար հիմքեր:

7. Եթե շահույթը ներառում է սույն Համաձայնագրի այլ հոդվածներում դիտարկվող եկամուտների տարբեր կամ եկամուտ, ապա սույն հոդվածի դրույթները չեն ազդում այդ հոդվածների դրույթների վրա:

Հոդված 8

Միջազգային փոխադրումներ

1. Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից միջազգային փոխադրումներում ծովային, օդային նավերի, երկաթուղային կամ ավտոմոբիլային տրանսպորտային միջոցների շահագործումից ստացված շահույթը հարկվում է միայն այդ Պետությունում:

2. Պայմանավորվող պետության ռեզիդենտի շահույթը՝ ստացած միջազգային փոխադրումներում տրանսպորտային միջոցների վարձակալությունից, ինչպես նաև բեռնարկղերի և նրանց վերաբերող սարքավորումների շահագործումից, եթե այդպիսի վարձակալությունը, հանգամանքներից կախված, երկրորդական է միջազգային փոխադրումներում տրանսպորտային միջոցների շահագործման նկատմամբ, հարկվում է միայն այդ Պետությունում:

3. 1-ին և 2-րդ կետերի դրույթները տարածվում են այն շահույթի վրա, որը ստացվել է Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից՝ համատեղ ձեռնարկությունում, համատեղ ծառայությունների մատուցման մասնակցությունից կամ միջազգային կազմակերպությունում միջոցների շահագործման արդյունքում:

Հոդված 9

Չուգորդված (ասոցացված) ձեռնարկություններ

1. Այն դեպքում, երբ.

ա) Պայմանավորվող պետության ձեռնարկությունը ուղղակի կամ անուղղակի կերպով մասնակցում է մյուս Պայմանավորվող պետության ձեռնարկության կառավարմանը, վերահսկմանը, կամ

բ) միևնույն անձինք ուղղակի կամ անուղղակի կերպով մասնակցում են Պայմանավորվող պետության ձեռնարկության, ինչպես նաև մյուս Պայմանավորվող պետության ձեռնարկության կառավարմանը, վերահսկմանը, և ամեն դեպքում երկու ձեռնարկությունների միջև նրանց առևտրային և ֆինանսական փոխհարաբերություններում ստեղծվում կամ սահմանվում են պայմաններ, որոնք տարբերվում են այն պայմաններից, որոնք կարող էին լինել անկախ ձեռնարկությունների միջև, ապա ցանկացած շահույթ, որը կարող էր հաշվանցվել նրանցից մեկին, բայց այդ պայմանների պատճառով չի հաշվանցվել, կարող է ներառվել այդ ձեռնարկության շահույթի մեջ և, համապատասխանաբար, հարկվել:

2. Այն դեպքում, երբ մի Պայմանավորվող պետությունը այդ Պետության շահույթի կազմում ներառում և, համապատասխանաբար, հարկում է մի շահույթ, որի նկատմամբ մյուս Պայմանավորվող պետության ձեռնարկությունը այդ մյուս Պետությունում հարկվում է, և այդ կերպ ներառված շահույթը հանդիսանում է շահույթ, որը կհաշվանցվեր առաջինը նշված Պետության ձեռնարկությանը, եթե երկու ձեռնարկությունների միջև ստեղծված փոխհարաբերությունները այնպիսին լինեին, որոնք գոյություն ունեն անկախ ձեռնարկությունների միջև, ապա այդ մյուս Պետությունը կարող է կատարել այդ շահույթից գանձվող հարկի գումարի համապատասխան ճշգրտում: Այդպիսի ճշգրտումը որոշելիս պետք է հաշվի առնվեն սույն Համաձայնագրի մյուս դրույթները, իսկ Պայմանավորվող պետության իրավասու մարմինները անհրաժեշտության դեպքում կխորհրդակցեն միմյանց հետ:

Հոդված 10

Շահաբաժիններ

1. Շահաբաժինները, որոնք վճարում է Պայմանավորվող պետության ռեզիդենտ հանդիսացող ընկերությունը մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտին, կարող են հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Սակայն այդպիսի շահաբաժինները կարող են հարկվել նաև այն Պայմանավորվող պետությունում, որի ռեզիդենտն է համարվում շահաբաժիններ վճարող ընկերությունը՝ այդ Պետության օրենսդրության համապատասխան. բայց եթե շահաբաժինների փաստացի սեփականատերը մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ է, ապա այդ ձևով

գանձվող հարկը չպետք է գերազանցի շահաբաժինների ընդհանուր գումարի 10 տոկոսը:

Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները այդպիսի սահմանափակումների կիրառման եղանակը կորոշեն փոխադարձ համաձայնությամբ:

Այս կետը չի շոշափում ընկերության հարկումը այն շահույթի նկատմամբ, որից վճարվում են շահաբաժինները:

3. «Շահաբաժիններ» տերմինը սույն հոդվածում օգտագործվելիս նշանակում է՝ եկամուտներ բաժնետոմսերից կամ այլ՝ շահույթին մասնակցության իրավունք տվող և պարտապահանջ չհանդիսացող իրավունքներից, ինչպես նաև եկամուտ այլ կորպորատիվ իրավունքներից, որը պատկանում է այնպիսի հարկային կարգավորման, ինչպես բաժնետոմսերից եկամուտը, այն Պետության օրենսդրությանը համապատասխան, որի ռեզիդենտն է հանդիսանում շահույթ բաշխող ընկերությունը:

4. 1-ին և 2-րդ կետերի դրույթները չեն կիրառվում, եթե շահաբաժինների փաստացի սեփականատերը, լինելով Պայմանավորվող պետության ռեզիդենտ, ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում, որտեղ շահաբաժիններ վճարող ընկերությունը ռեզիդենտ է հանդիսանում, այնտեղ տեղակայված մշտական հաստատության միջոցով կամ անկախ անձնական ծառայություններ է մատուցում կամ մատուցել է այդ մյուս Պայմանավորվող պետությունում այնտեղ տեղակայված հաստատուն բազայից, և մասնակցությունը, որի հետ կապված վճարվում են շահաբաժինները, իրապես կապված է մշտական հաստատության կամ հաստատուն բազայի հետ: Այդ դեպքում, հանգամանքներից կախված, կիրառվում են 7-րդ կամ 14-րդ հոդվածների դրույթները:

5. Այն դեպքում, երբ Պայմանավորվող պետության ռեզիդենտ հանդիսացող ընկերությունը շահույթ կամ եկամուտ է ստանում մյուս Պայմանավորվող պետությունից, այդ մյուս Պետությունը կարող է չգանձել ընկերության վճարած շահաբաժիններից ցանկացած հարկ՝ բացառությամբ այն դեպքերի, եթե այդպիսի շահաբաժինները վճարվում են այդ մյուս Պետության ռեզիդենտին, կամ եթե մասնակցությունը, որի նկատմամբ վճարվում են շահաբաժինները, իրապես վերաբերում է այդ մյուս Պետությունում տեղակայված մշտական հաստատությանը կամ հաստատուն բազային, ինչպես նաև չի գանձվում հարկ ընկերության չբաշխված շահույթից, անգամ եթե շահաբաժինները վճարվում կամ չբաշխված շահույթը լիովին կամ մասամբ կազմվում են այդ մյուս Պետությունում առաջացող շահույթից կամ եկամտից:

Հոդված 11 **Տոկոսներ**

1. Տոկոսները, որոնք առաջանում են մի Պայմանավորվող պետությունում և վճարվում են մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտին, կարող են հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Սակայն այդպիսի տոկոսները կարող են հարկվել այն Պայմանավորվող պետությունում, որտեղ դրանք առաջանում են, այդ

Պետության օրենսդրության համապատասխան, բայց եթե տոկոսների փաստացի սեփականատերը հանդիսանում է մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ, ապա այդպես գանձվող հարկը չպետք է գերազանցի տոկոսների ընդհանուր գումարի 10 տոկոսը: Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները այսպիսի սահմանափակումների կիրառման եղանակը կորոշեն փոխադարձ համաձայնությամբ:

3. Չնայած սույն հոդվածի 2-րդ կետի դրույթներին՝ Պայմանավորվող պետությունում առաջացող տոկոսները պետք է ազատվեն այդ Պետությունում հարկից, եթե այդ տոկոսները վճարվում են և իսկապես պատկանում են մյուս Պայմանավորվող պետության Կառավարությանը կամ ազգային (կենտրոնական) բանկին:

4. «Տոկոսներ» տերմինը սույն Համաձայնագրում օգտագործվելիս նշանակում է՝ եկամուտ ցանկացած տեսակի պարտապահանջից, անկախ գրավային ապահովումից և պարտապանի շահույթներին մասնակցելու իրավունքի առկայությունից և, մասնավորապես, եկամուտ կառավարական արժեթղթերից և փոխառության տոմսերից կամ պարտատոմսերից՝ ներառյալ այդպիսի արժեթղթերի, պարտատոմսերի կամ փոխառության տոմսերի պարզավճարներն ու շահումները: Սույն հոդվածի նպատակների համար ժամկետանց վճարումների դիմաց գանձվող տուգանքները չեն դիտվում որպես տոկոսներ:

5. Սույն հոդվածի 1-ին և 2-րդ կետերի դրույթները չեն կիրառվում, եթե տոկոսների փաստացի սեփականատերը, լինելով Պայմանավորվող պետության ռեզիդենտ, ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում, որտեղ առաջանում են տոկոսները այնտեղ տեղակայված մշտական հաստատության միջոցով, կամ այդ մյուս Պետությունում անկախ անձնական ծառայություններ է մատուցում այնտեղ տեղակայված հաստատուն բազայի միջոցով, և պարտապահանջը, որի նկատմամբ տոկոսները վճարվում են, իրապես կապված է այդպիսի մշտական հաստատության կամ հաստատուն բազայի հետ: Այդ դեպքում, հանգամանքներից կախված, կիրառվում են 7-րդ կամ 14-րդ հոդվածների դրույթները:

6. Համարվում է, որ տոկոսներն առաջանում են Պայմանավորվող պետությունում, եթե վճարող է հանդիսանում ինքը՝ այդ Պետությունը, նրա վարչատարածքային ստորաբաժանումը, իշխանության տեղական մարմինները կամ այդ Պետության ռեզիդենտը: Սակայն եթե տոկոսներ վճարող անձը, անկախ այն հանգամանքից՝ Պայմանավորվող պետության ռեզիդենտ է հանդիսանում, թե ոչ, Պայմանավորվող պետությունում ունի մշտական հաստատություն կամ հաստատուն բազա, որոնց առնչությամբ առաջացել է պարտքը, որի մասով վճարվում են տոկոսները, և այդ տոկոսները վճարվում են այդպիսի մշտական հաստատության կամ հաստատուն բազայի կողմից, ապա համարվում է, որ նման տոկոսները առաջանում են այն Պետությունում, որտեղ տեղակայված է մշտական հաստատությունը կամ հաստատուն բազան:

7. Եթե վճարողի և տոկոսների փաստացի սեփականատիրոջ միջև կամ նրանց երկուսի և որևէ այլ երրորդ անձի միջև հատուկ փոխհարաբերությունների պատճառով վճարման համար հիմք ծառայող՝ պարտապահանջին վերաբերող տոկոսների գումարը գերազանցում է այն գումարը, որը կհամաձայնեցվեր վճարողի և տոկոսների փաստացի

սեփականատիրոջ միջև նման հարաբերությունների բացակայության դեպքում, ապա սույն հոդվածի դրույթները կիրառվում են միայն վերջինը հիշատակված գումարի նկատմամբ: Այդ դեպքում վճարի ավելցուկային մասը մնում է հարկման ենթակա Պայմանավորվող պետություններից յուրաքանչյուրի օրենսդրության համապատասխան՝ հաշվի առնելով սույն Համաձայնագրի մյուս դրույթները:

Հոդված 12 Ռոյալթի

1. Մի Պայմանավորվող պետությունում առաջացող և մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտին վճարվող ռոյալթին կարող է հարկվել միայն այդ մյուս Պետությունում:

2. Սակայն այդպիսի ռոյալթին կարող է հարկվել նաև այն Պայմանավորվող պետությունում, որտեղ այն առաջանում է, այդ Պետության օրենսդրության համապատասխան, սակայն եթե ստացողը և ռոյալթիի փաստացի սեփականատերը հանդիսանում են մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ, ապա այդ ձևով գանձված հարկը չպետք է գերազանցի ռոյալթիի ընդհանուր գումարի 10 տոկոսը:

Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները այսպիսի սահմանափակումների կիրառման եղանակը կորոշեն փոխադարձ համաձայնությամբ:

3. «Ռոյալթի» տերմինը սույն հոդվածում օգտագործվելիս նշանակում է՝ փոխհատուցման ձևով ստացած ցանկացած տեսակի վճարում գրական, արվեստաբանական կամ գիտական աշխատանքների, ներառյալ կինոնկարների, ցանկացած պատենտի, ապրանքային նշանի, նախագծի կամ մոդելի, գծագրի, գաղտնի բանաձևի կամ գործընթացի ցանկացած հեղինակային իրավունքի օգտագործման կամ օգտագործման իրավունքի համար կամ արդյունաբերական, առևտրային կամ գիտական փորձին վերաբերող տեղեկության համար:

4. 1-ին և 2-րդ կետերի դրույթները չեն կիրառվում, եթե ռոյալթիի փաստացի սեփականատերը, հանդիսանալով Պայմանավորվող պետության ռեզիդենտ, ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում, որտեղ առաջանում է ռոյալթին, այնտեղ տեղակայված մշտական հաստատության միջոցով կամ այդ մյուս Պետությունում անկախ անձնական ծառայություններ է մատուցում այնտեղ տեղակայված հաստատուն բազայի միջոցով, և իրավունքը կամ գույքը, որոնց նկատմամբ վճարվում է ռոյալթին, իրապես կապված են այդպիսի մշտական հաստատության կամ հաստատուն բազայի հետ: Այդ դեպքում, հանգամանքներից կախված, կիրառվում են 7-րդ կամ 14-րդ հոդվածի դրույթները:

5. Համարվում է, որ ռոյալթին առաջանում է Պետությունում, եթե վճարողը հանդիսանում է այդ Պետության ռեզիդենտ: Սակայն եթե ռոյալթի վճարող անձը, անկախ Պետության ռեզիդենտ լինելու կամ չլինելու հանգամանքից, Պետությունում ունի մշտական հաստատություն կամ հաստատուն բազա, որոնց առնչությամբ առաջացել է ռոյալթի վճարելու պարտավորությունը, և այդպիսի ռոյալթին վճարվում է այդպիսի մշտական հաստատության կամ հաստատուն բազայի կողմից, ապա այդպիսի ռոյալթին համարվում է

առաջացած այն Պետությունում, որտեղ տեղակայված է մշտական հաստատությունը կամ հաստատուն բազան:

6. Եթե վճարողի և փաստացի սեփականատիրոջ կամ նրանց երկուսի և որևէ երրորդ անձի միջև հատուկ հարաբերությունների արդյունքում վճարման համար հիմք ծառայող՝ օգտագործման, իրավունքի կամ տեղեկության համար վճարված կամ հաշվանցված ռոյալթիի գումարը գերազանցում է այն գումարը, որը առաջարկվում է համաձայնեցման ընթացքում վճարողի և փաստացի սեփականատիրոջ միջև նման հարաբերությունների բացակայության դեպքում, ապա սույն հոդվածի դրույթները պետք է կիրառվեն միայն վերջինը հիշատակված գումարի նկատմամբ: Այդ դեպքում ռոյալթիի վճարված կամ հաշվանցված գումարի գերազանցող մասը առաջվա պես պետք է հարկել յուրաքանչյուր Պայմանավորվող պետության օրենսդրության համապատասխան՝ պատշաճորեն հաշվի առնելով սույն Համաձայնագրի այլ դրույթները:

Հոդված 13

Եկամուտներ գույքի օտարումից

1. 6-րդ հոդվածում նշված և մյուս Պայմանավորվող պետությունում գտնվող անշարժ գույքի օտարումից Պայմանավորվող պետության ռեզիդենտի ստացած եկամուտները կարող են հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Մյուս Պայմանավորվող պետությունում՝ Պայմանավորվող պետության ձեռնարկությանը պատկանող մշտական հաստատության ձեռնարկատիրական գույքի մաս կազմող շարժական գույքի կամ անկախ անձնական ծառայությունների մատուցման նպատակով մի Պայմանավորվող պետության ռեզիդենտի տրամադրության տակ գտնվող և մյուս Պայմանավորվող պետությունում գտնվող հաստատուն բազային վերաբերող շարժական գույքի օտարումից առաջացած եկամուտները, ներառյալ այդ մշտական հաստատության (առանձին կամ ամբողջ ձեռնարկության հետ մեկտեղ) կամ այդպիսի հաստատուն բազայի օտարումից առաջացած եկամուտները, կարող են հարկվել այդ մյուս Պետությունում:

3. Միջազգային փոխադրումներում Պայմանավորվող պետության ձեռնարկության կողմից շահագործվող ծովային նավերի և օդանավերի, ավտոմոբիլային կամ երկաթուղային տրանսպորտային միջոցի կամ այդպիսի տրանսպորտային միջոցների շահագործմանը վերաբերող շարժական գույքի օտարումից ստացված եկամուտները կարող են հարկվել միայն այդ Պայմանավորվող պետությունում:

4. Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից ընկերության բաժնետոմսերի կամ այլ կորպորատիվ իրավունքների օտարումից ստացվող եկամուտները կարող են հարկվել մյուս Պայմանավորվող պետությունում, եթե այդ ընկերության ակտիվները ուղղակի կամ անուղղակի կերպով, ամբողջությամբ կամ հիմնականում կազմված են այդ մյուս Պետությունում տեղակայված անշարժ գույքից:

5. 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ կետերում չհիշատակված ցանկացած այլ գույքի օտարումից առաջացած եկամուտները ենթակա են հարկման միայն

այն Պայմանավորվող պետությունում, որի ռեզիդենտ է հանդիսանում գույքը օտարող անձը:

Հոդված 14

Անկախ անձնական ծառայություններ

1. Մասնագիտական ծառայություններից կամ, անկախ բնույթից, այլ համանման գործունեությունից Պայմանավորվող պետության ռեզիդենտի ստացած եկամուտը ենթակա է հարկման միայն այդ Պետությունում՝ բացառությամբ այն դեպքի, երբ նա մյուս Պայմանավորվող պետությունում այդ գործունեությունը իրականացնելու նպատակով կանոնավոր կերպով իր տրամադրության տակ ունի հասանելի մշտական բազա: Եթե նա ունի այդպիսի մշտական բազա, եկամուտը կարող է հարկվել մյուս Պետությունում. բայց միայն այն չափով, որը վերագրելի է այդ մշտական բազային:

2. «Մասնագիտական ծառայություններ» տերմինը, մասնավորապես, ներառում է անկախ գիտական, գրական, արվեստաբանական, կրթական կամ ուսուցչական գործունեությունը, ինչպես նաև բժիշկների, իրավաբանների, ճարտարագետների, ճարտարապետների, ատամնաբույժների, հաշվապահների և աուդիտորների անկախ գործունեությունը:

3. Սույն Համաձայնագրի նպատակների համար «մշտական բազա» տերմինը նշանակում է՝ ցանկացած մշտական վայր, որի միջոցով ամբողջովին կամ մասամբ իրականացվում է անկախ անձնական ծառայություններ տրամադրող ֆիզիկական անձի գործունեությունը:

Հոդված 15

Կախյալ անձնական ծառայություններ

1. Հաշվի առնելով 16-րդ, 18-րդ և 19-րդ հոդվածների դրույթները՝ Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից վարձու աշխատանքի դիմաց ստացված աշխատավարձը և համանման այլ վարձատրությունները ենթակա են հարկման միայն այդ Պետությունում, եթե միայն այդպիսի վարձու աշխատանքը չի իրականացվում մյուս Պայմանավորվող պետությունում: Եթե վարձու աշխատանքը իրականացվում է նման ձևով, դրա հետ կապված վարձատրությունը կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Չնայած 1-ին կետի դրույթներին՝ Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից մյուս Պայմանավորվող պետությունում իրականացվող «վարձու» աշխատանքի դիմաց ստացված վարձատրությունները ենթակա են հարկման միայն առաջինը հիշատակված Պետությունում, եթե.

ա) ստացողը ցանկացած տասներկուամսյա ժամանակաշրջանում, որը սկսվում և վերջանում է տվյալ հարկային տարում, գտնվում է մյուս Պայմանավորվող պետությունում ընդհանուր առմամբ 182 օրը չգերազանցող ժամանակահատվածում կամ ժամանակահատվածներում, և

բ) վարձատրությունը վճարվում է մյուս Պետության ռեզիդենտ շահանդիսացող գործատուի կողմից կամ նրա անունից, և

գ) վարձատրության վճարման ծախսերը չի կրում գործատուի՝ մյուս Պետությունում ունեցած մշտական հաստատությունը կամ հաստատուն բազան:

3. Չնայած սույն հոդվածի նախորդ դրույթներին՝ միջազգային փոխադրումներում շահագործվող ծովային նավի կամ օդանավի վրա կամ ավտոմոբիլային կամ երկաթուղային տրանսպորտային միջոցներում իրականացվող վարձու աշխատանքի դիմաց ստացված՝ Պայմանավորվող պետության ռեզիդենտի վարձատրությունները կարող են հարկվել այդ Պայմանավորվող պետությունում:

Հոդված 16

Տնօրենների վարձատրություն

Տնօրենների վարձատրությունը և այլ համանման վճարումները, որոնք ստացվում են Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից՝ որպես մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ ընկերության տնօրենների խորհրդի կամ համանման այլ մարմնի անդամ, կարող են հարկվել այդ մյուս Պետությունում:

Հոդված 17

Արվեստի աշխատողներ և մարզիկներ

1. Անկախ 14-րդ և 15-րդ հոդվածների դրույթներից՝ մի Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից մյուս Պայմանավորվող պետությունում որպես արվեստի աշխատող, ինչպիսին է թատրոնի, կինոյի, ռադիոյի կամ հեռուստատեսության արտիստը կամ երաժիշտը, կամ որպես մարզիկ իրականացրած անձնական գործունեությունից ստացված եկամուտը կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Եթե արվեստի աշխատողի կամ մարզիկի՝ որպես այդպիսին իրականացրած անձնական գործունեությունից ստացած եկամուտը հաշվեգրվում է ոչ թե անձամբ արվեստի աշխատողին կամ մարզիկին, այլ մեկ ուրիշ անձի, ապա այդ եկամուտը, անկախ 7-րդ, 14-րդ և 15-րդ հոդվածների դրույթներից, հարկվում է այն Պայմանավորվող պետությունում, որտեղ իրականացվում է արվեստի աշխատողի կամ մարզիկի գործունեությունը:

3. Անկախ 1-ին և 2-րդ կետերի դրույթներից՝ որպես արվեստի աշխատող կամ մարզիկ իր անձնական գործունեությունից Պայմանավորվող պետության ռեզիդենտի ստացած եկամուտը հարկվում է միայն այդ Պետությունում, եթե մյուս Պայմանավորվող պետությունում գործունեությունը իրականացվում է միջկառավարական համաձայնագրերի հիման վրա՝ մշակութային և մարզական փոխանակման ծրագրերի շրջանակներում:

Հոդված 18

Կենսաթոշակներ, այլ համանման վճարումներ և անուիտետ

1. Հաշվի առնելով 19-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթները՝ Պայմանավորվող պետության ռեզիդենտին նախկինում կատարված վարձու աշխատանքի համար վճարված կենսաթոշակները և համանման այլ

վարձատրությունները, ինչպես նաև անուիտետը ենթակա են հարկման միայն այն Պետությունում, որտեղ դրանք առաջանում են:

2. «Անուիտետ» տերմինը նշանակում է՝ սահմանված գումար, որը հաստատված ժամկետներում պարբերաբար ենթակա է վճարման ֆիզիկական անձին ամբողջ կյանքի ընթացքում կամ որոշված և հաստատված ժամանակահատվածում՝ համաձայն պարտավորության, կատարել այդպիսի վճարումները համարժեք և լիակատար վարձատրության փոխարեն:

Հոդված 19

Պետական ծառայություն

1. ա) Պայմանավորվող պետության կամ նրա վարչատարածքային ստորաբաժանման կամ իշխանության տեղական մարմնի կողմից այդ Պետությանը կամ նրա վարչատարածքային ստորաբաժանմանը կամ իշխանության տեղական մարմնին մատուցած ծառայությունների դիմաց ցանկացած ֆիզիկական անձին վճարված՝ կենսաթոշակից տարբերվող վարձատրությունը ենթակա է հարկման միայն այդ Պետությունում:

բ) Սակայն այդպիսի վարձատրությունը ենթակա է հարկման միայն մյուս Պայմանավորվող պետությունում, եթե ծառայությունները մատուցվում են այդ մյուս Պետությունում, և այդ Պետության ռեզիդենտ հանդիսացող ֆիզիկական անձը.

i) այդ Պետության քաղաքացի է, կամ

ii) չի դարձել այդ Պետության ռեզիդենտ բացառապես այդպիսի ծառայություններ մատուցելու նպատակով:

2. ա) Պայմանավորվող պետության, նրա վարչատարածքային ստորաբաժանման կամ իշխանության տեղական մարմնի կողմից կամ նրանց կողմից ստեղծված հիմնադրամներից այդ Պետությանը կամ նրա վարչատարածքային ստորաբաժանմանը կամ իշխանության տեղական մարմնին մատուցած ծառայությունների դիմաց ֆիզիկական անձին վճարված որևէ կենսաթոշակ ենթակա է հարկման միայն այդ Պետությունում:

բ) Սակայն այդպիսի կենսաթոշակը ենթակա է հարկման միայն մյուս Պայմանավորվող պետությունում, եթե ֆիզիկական անձը հանդիսանում է այդ Պետության ռեզիդենտն ու քաղաքացին:

3. 15-րդ, 16-րդ և 18-րդ հոդվածների դրույթները կիրառվում են Պայմանավորվող պետության, նրա վարչատարածքային ստորաբաժանման կամ իշխանության տեղական մարմնի կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության հետ կապված ծառայությունների դիմաց վարձատրությունների և կենսաթոշակների նկատմամբ:

Հոդված 20

Ուսանողներ

Ուսանողը, ասպիրանտը կամ ստաժյորը, որը հանդիսանում է կամ անմիջապես մինչև մի Պայմանավորվող պետություն ժամանելը հանդիսացել է մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ, և որը գտնվում է առաջինը հիշատակված Պետությունում բացառապես ուսում կամ

կրթություն ստանալու նպատակով, այդ Պետությունում չի հարկվում իր ապրելու, ուսանելու կամ մասնագիտանալու համար ստացած վճարումների առնչությամբ, եթե այդպիսի վճարումները առաջանում են այդ Պետությունից դուրս գտնվող աղբյուրներից:

Հոդված 21 **Այլ եկամուտ**

1. Պայմանավորվող պետության ռեզիդենտի՝ սույն Համաձայնագրի նախորդ հոդվածներում չհիշատակված եկամտի տեսակները, անկախ առաջացման վայրից, ենթակա են հարկման միայն այդ Պետությունում:

2. 1-ին կետի դրույթները չեն կիրառվում 6-րդ հոդվածի 2-րդ կետում սահմանված անշարժ գույքից ստացված եկամտից տարբերվող եկամտի նկատմամբ, եթե այդպիսի եկամուտ ստացողը, հանդիսանալով Պայմանավորվող պետության ռեզիդենտ, ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում այդ մյուս Պետությունում տեղակայված մշտական հաստատության միջոցով կամ անկախ անձնական ծառայություններ է մատուցում մյուս Պայմանավորվող պետությունում այդ մյուս Պետությունում գտնվող հաստատուն բազայի միջոցով, և իրավունքը կամ գույքը, որոնց կապակցությամբ վճարվել է եկամուտը, իրապես կապված են այդպիսի մշտական հաստատության կամ հաստատուն բազայի հետ: Այդ դեպքում, հանգամանքներից կախված, կիրառվում են 7-րդ հոդվածի կամ 14-րդ հոդվածի դրույթները:

Հոդված 22 **Գույք**

1. 6-րդ հոդվածում նշված անշարժ գույքի տեսքով ներկայացված՝ Պայմանավորվող պետության ռեզիդենտին պատկանող և մյուս Պայմանավորվող պետությունում գտնվող գույքը կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Մյուս Պայմանավորվող պետությունում մշտական հաստատության առևտրային գույքի մաս կազմող շարժական գույքով ներկայացված՝ Պայմանավորվող պետության ձեռնարկության գույքը կամ մյուս Պայմանավորվող պետությունում անկախ անձնական ծառայությունների մատուցման նպատակով Պայմանավորվող պետության ռեզիդենտի տրամադրության տակ գտնվող հաստատուն բազային վերաբերող շարժական գույքի տեսքով ներկայացված գույքը կարող են հարկվել այդ մյուս Պետությունում:

3. Պետության ռեզիդենտի կողմից միջազգային փոխադրումներում շահագործվող ծովային, օդային, երկաթուղային կամ ավտոմոբիլային տրանսպորտային միջոցներով ներկայացված գույքը և այդպիսի տրանսպորտային միջոցների շահագործման հետ կապված շարժական գույքը հարկվում են միայն այդ Պետությունում:

4. Մի Պայմանավորվող պետությունում գտնվող՝ գլխավորապես անշարժ գույքից կազմված ակտիվներ ունեցող ընկերության՝

բաժնետոմսերով կամ այլ կորպորատիվ իրավունքներով ներկայացված գույքը կարող է հարկվել այդ Պայմանավորվող պետությունում:

5. Պայմանավորվող պետության ռեզիդենտի գույքի բոլոր այլ տարրերը հարկվում են միայն այդ Պետությունում:

Հոդված 23

Կրկնակի հարկման բացառման մեթոդը

1. Եթե Պայմանավորվող պետության ռեզիդենտը եկամուտ է ստանում կամ գույք է տնօրինում, որը, սույն Համաձայնագրի դրույթներին համապատասխան, կարող է հարկվել մյուս Պայմանավորվող պետությունում, ապա առաջինը հիշատակված Պետությունը թույլատրում է.

ա) այդ ռեզիդենտի եկամտի հարկի նվազեցում այդ մյուս Պետությունում վճարված եկամտի հարկին հավասար գումարի չափով,

բ) այդ ռեզիդենտի գույքի հարկի նվազեցում այդ մյուս Պետությունում վճարված գույքի հարկին հավասար գումարի չափով:

Այդ նվազեցումները, ցանկացած դեպքում, չպետք է գերազանցեն մինչև նվազեցման իրականացումը հաշվարկված եկամտի հարկի կամ գույքի հարկի այն մասը, որը վերագրելի է այն եկամտին կամ գույքին, որը, կախված հանգամանքներից, կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Այն դեպքում, երբ, սույն Համաձայնագրի որևէ դրույթին համապատասխան, Պայմանավորվող պետության ռեզիդենտի ստացած եկամուտը կամ գույքը ազատված է հարկումից այդ Պետությունում, ապա այդպիսի Պետությունը, այնուամենայնիվ, կարող է այդպիսի ռեզիդենտի եկամտի կամ գույքի մնացած մասի համար հարկի գումարը հաշվարկելիս հաշվի առնել հարկից ազատված եկամուտը կամ գույքը:

Հոդված 24

Անխտրականություն

1. Պայմանավորվող պետության ազգային անձինք մյուս Պայմանավորվող պետությունում չեն կարող ենթարկվել այլ կամ ավելի ծանր հարկման կամ դրա հետ կապված պարտավորության, քան այն հարկումն ու դրա հետ կապված պարտավորությունն են, որոնց միևնույն հանգամանքների դեպքում ենթարկվում են կամ կարող են ենթարկվել այդ մյուս Պետության ազգային անձինք: Չնայած 1-ին հոդվածի դրույթներին՝ սույն դրույթը կիրառվում է նաև Պայմանավորվող պետություններից մեկի կամ երկուսի ռեզիդենտ չհանդիսացող անձանց նկատմամբ:

2. Պայմանավորվող պետության ռեզիդենտ հանդիսացող քաղաքացիություն չունեցող անձինք Պայմանավորվող պետություններից և ոչ մեկում չպետք է ենթարկվեն այլ կամ ավելի ծանր որևէ հարկման կամ դրա հետ կապված որևէ պարտավորության, մասնավորապես, կապված ռեզիդենտության հետ, այն քան հարկումն ու դրա հետ կապված պարտավորությունն են, որոնց միևնույն հանգամանքների դեպքում ենթարկվում են կամ կարող են ենթարկվել ազգային անձինք:

3. Մյուս Պայմանավորվող պետությունում Պայմանավորվող պետության ձեռնարկության ունեցած մշտական հաստատության հարկումը այդ մյուս Պետությունում չպետք է լինի նվազ բարենպաստ, քան այդ մյուս

Պետությունում համանման գործունեություն իրականացնող՝ այդ մյուս Պետության ձեռնարկության հարկումն է:

Սույն հոդվածի դրույթները չպետք է մեկնաբանվեն որպես մի Պայմանավորվող պետությանը պարտավորեցնող՝ տրամադրել մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտներին քաղաքացիական կարգավիճակի կամ ընտանեկան հանգամանքների հիման վրա հարկման նպատակներով այնպիսի անձնական արտոնություններ, նվազեցումներ և զեղչեր, ինչպիսիք Պայմանավորվող պետությունը շնորհում է իր սեփական ռեզիդենտներին:

4. Բացառությամբ այն դեպքերի, երբ կիրառվում են 9-րդ հոդվածի 1-ին կետի, 11-րդ հոդվածի 7-րդ կետի կամ 12-րդ հոդվածի 6-րդ կետի դրույթները, մի Պայմանավորվող պետության ձեռնարկության կողմից մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտին վճարված տոկոսները, ռոյալթին և այլ վճարումները այդպիսի ձեռնարկության հարկվող շահույթի որոշման նպատակով ենթակա են նվազեցման նույն պայմաններով, ինչպես նվազեցվում են առաջինը հիշատակված Պետության ռեզիդենտին վճարելիս: Նմանապես, մի Պայմանավորվող պետության ձեռնարկության ցանկացած պարտքը մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտին այդ ձեռնարկության հարկման ենթակա գույքի որոշման նպատակով ենթակա է նվազեցման նույն պայմաններով, ինչպես նվազեցվում է պարտքը առաջինը հիշատակված Պետության ռեզիդենտին:

5. Մի Պայմանավորվող պետության ձեռնարկությունը, որի կապիտալն ամբողջությամբ կամ մասամբ, ուղղակիորեն կամ անուղղակիորեն պատկանում կամ վերահսկվում է մյուս Պայմանավորվող պետության մեկ կամ մի քանի ռեզիդենտների կողմից, չպետք է առաջինը հիշատակված Պետությունում ենթարկվի այլ կամ ավելի ծանր հարկման կամ դրա հետ կապված պարտավորության, քան այն հարկումը կամ դրա հետ կապված պարտավորություններն են, որոնց ենթարկվում են կամ կարող են ենթարկվել առաջինը հիշատակված Պետության այլ համանման ձեռնարկությունները:

6. Չնայած 2-րդ հոդվածի դրույթներին՝ սույն հոդվածի դրույթները կիրառվում են ամեն տեսակի և ձևի հարկերի նկատմամբ:

Հոդված 25

Փոխհամաձայնեցման ընթացակարգ

1. Եթե մի Պայմանավորվող պետության ռեզիդենտ հանդիսացող անձը գտնում է, որ Պայմանավորվող պետություններից մեկի կամ երկուսի գործողությունները հանգեցնում են կամ կհանգեցնեն իր՝ սույն Համաձայնագրի դրույթներին չհամապատասխանող հարկման, ապա այդ անձը կարող է, այդ Պետությունների ներքին օրենքով նախատեսված պաշտպանության միջոցներից անկախ, ներկայացնել իր գործն այն Պայմանավորվող պետության իրավասու մարմնին, որի ռեզիդենտն է հանդիսանում, կամ, եթե իր գործը վերաբերում է 24-րդ հոդվածի 1-ին կետին, այն Պայմանավորվող պետության, որի քաղաքացին է հանդիսանում: Դիմումը պետք է ներկայացվի սույն Համաձայնագրի դրույթներին չհամապատասխանող հարկման հանգեցնող գործողության մասին առաջին ծանուցման պահից երեք տարվա ընթացքում:

2. Եթե իրավասու մարմինը դիմում-բողոքը համարում է հիմնավորված, սակայն ինքն ի վիճակի չէ ինքնուրույն հանգելու գոհացուցիչ լուծման, ապա նա ձգտում է խնդիրը լուծել մյուս Պայմանավորվող պետության իրավասու մարմինների հետ փոխադարձ համաձայնությամբ՝ կրկնակի հարկումը բացառելու նպատակով, որը իրավական չէ սույն Համաձայնագրի դրույթների տեսանկյունից: Չեռք բերված ցանկացած համաձայնություն պետք է իրականացվի՝ անկախ Պայմանավորվող պետությունների ազգային օրենքում նախատեսված որևէ ժամանակային սահմանափակումից:

3. Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները սույն Համաձայնագրի դրույթների կիրառման ընթացքում առաջացող ցանկացած դժվարություն կամ կասկած կձգտեն լուծել փոխադարձ համաձայնությամբ: Նրանք կարող են նաև խորհրդակցել միմյանց հետ, Համաձայնագրով չնախատեսված դեպքերում, կրկնակի հարկումը վերացնելու նպատակով:

4. Նախորդ կետերի առնչությամբ համաձայնության հասնելու նպատակով Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները կարող են ուղղակի կապ հաստատել միմյանց հետ, ներառյալ՝ իրենցից կամ իրենց ներկայացուցիչներից կազմված համատեղ հանձնաժողովի միջոցով:

Հոդված 26

Տեղեկատվության փոխանակում

1. Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները փոխանակում են այնպիսի տեղեկություններ, որոնք անհրաժեշտ են սույն Համաձայնագրի դրույթների կամ Համաձայնագրում ընդգրկված հարկերի վերաբերյալ Պայմանավորվող պետությունների ազգային օրենքների դրույթների կիրառման համար՝ այնքանով, որքանով այդ օրենքներով սահմանված հարկումը չի հակասում սույն Համաձայնագրին, մասնավորապես, հարկերի վճարումից խուսափելը կանխելու համար: Տեղեկատվության փոխանակումը չի սահմանափակվում 1-ին հոդվածով: Պայմանավորվող պետության ստացած ցանկացած տեղեկատվություն համարվում է գաղտնի, ինչպես այդ Պետության ազգային օրենքների սահմաններում ստացված տեղեկատվությունը, և կարող է հաղորդվել միայն այն անձանց կամ մարմիններին (ներառյալ դատարանները և վարչական մարմինները), որոնք զբաղվում են Համաձայնագրով ընդգրկված հարկերի հաշվարկմամբ կամ գանձմամբ, բռնագանձմամբ կամ դատական հետապնդմամբ, ինչպես նաև դատական կարգով կամ բողոքարկումների քննարկմամբ, և պետք է օգտագործվի միայն այդ նպատակների համար: Այդպիսի անձինք կամ մարմինները այդ տեղեկություններն օգտագործում են միայն այդպիսի նպատակների համար: Նրանք տեղեկությունները կարող են հրապարակել բաց դատական նիստի կամ իրավական որոշումների ընդունման ընթացքում:

2. 1-ին կետի դրույթները ոչ մի դեպքում չեն կարող մեկնաբանվել որպես Պայմանավորվող պետության իրավասու մարմնին պարտավորեցնող.

ա) ձեռնարկել այդ կամ մյուս Պայմանավորվող պետության օրենքներին և վարչական գործավարությանը հակասող վարչական միջոցառումներ,

բ) ներկայացնել տեղեկատվություն, որը չի կարելի ստանալ այդ կամ մյուս Պայմանավորվող պետության օրենքներով կամ սովորական վարչական գործավարության ընթացքում,

գ) ներկայացնել տեղեկատվություն, որը կբացահայտի որևէ առևտրային, արդյունաբերական, կոմերցիոն կամ մասնագիտական գաղտնիք կամ առևտրական գործընթաց, կամ փոխանցել տեղեկատվություն, որի հրապարակումը կհակասի պետական քաղաքականությանը:

Հոդված 27

Դիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսական հիմնարկների աշխատակիցներ

Սույն Համաձայնագրի ոչ մի դրույթ չի շոշափում դիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսական հիմնարկների աշխատակիցների հարկային արտոնությունները, որոնք սահմանված են միջազգային իրավունքի ընդհանուր կանոններով կամ հատուկ համաձայնագրերով:

Հոդված 28

Ուժի մեջ մտնելը

1. Պայմանավորվող պետությունները դիվանագիտական ուղիներով միմյանց գրավոր կծանուցեն սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար իրենց օրենսդրությամբ պահանջվող ներպետական ընթացակարգերի ավարտի մասին:

2. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ կմտնի վավերագրերի փոխանակումից հետո, և նրա դրույթները կգործեն.

ա) սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու տարվան հաջորդող օրացուցային տարվա հունվարի մեկից կամ հունվարի մեկից հետո վճարված կամ հաշվանցված գումարների նկատմամբ՝ աղբյուրի մոտ գանձվող հարկերի առնչությամբ,

բ) այլ հարկերի առնչությամբ՝ սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու տարվան հաջորդող օրացուցային տարվա հունվարի մեկից կամ հունվարի մեկից հետո:

Հոդված 29

Փոփոխությունների և լրացումների կատարումը

Պայմանավորվող կողմերի փոխադարձ համաձայնությամբ սույն Համաձայնագրում կարող են փոփոխություններ և լրացումներ կատարվել՝ ձևակերպված առանձին Արձանագրությամբ, որը կհանդիսանա սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

